ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Չարենցավանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Չարենցավան համայնքի Արզական գյուղի մանկապարտեզի մասնակի հիմնանորոգման, Բջնի գյուղի մանկապարտեզի մասնակի հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված <<**ՀՀ-ԳՀԱՇՁԲ**-19/4>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 **թվականի հունիսի** 05-**ին** կնքված N <<**ՀՀ-ԳՀԱՇՁԲ**-19/4>> պայմանագրում 2019 **թվականի օգոստոսի** 30-**ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ 1: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ավելացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները:

Փոփոխության նկարագրություն 1: Աշխատանքների կատարումն իրականացնելու նպատակով կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում 1: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 2)-րդ ենթակետ:

Փոփոխության առաջացման պատճառ 2: Պայմանագրով սահմանվել է, որ աշխատանքների կատարումն իրականացվելու է մինչև 2019 թվականի օգոստոսի 31-ը, սակայն աշխատանքների ծավալների ավելացման հետ կապված անհրաժեշտություն է առաջացել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել:

Փոփոխության նկարագրություն 2: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում 2: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4)-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**